Նոքա ասեն, զկետ դնալով հրամանի Արքային և Կուսակալին՝ ձեռամբ Դատաւորի եւ Գործակալաց՝ առաջի բազմութեան այլազգեաց, ոմանք կատարեցան, և մնացելոց ետուն հրաման առնել ըստ օրինաց մերոց, այլ գործք Բեթղեհէմի և Ս. Աստուածածնի ոչ կատարեցան։ Կուսակալն, միթէ Ցոյնք յօժարի՞ն տալ զիսկանս եկեղեցւոյն իւրեանց 'ի Բեթղեհէմ։

Ասեն՝ եկեղեցին ոչ է սեփհական Ցունաց, որպէս ոչ է գրեալ 'ի գիրս Սէլիմայ Արքայի, այլ առ հասարակ Բեթղեհէմ գիւղի։ եւ Ցոյնք առին զայն 'ի ձեռաց Լատինաց յամին 1758։ և այլ սոյնպիսի բանք երկար։ Կուսակալն՝ 'ի միոյ կողմանէ ունիք իրաւունս։ զի հպատակ էք Տէրութեան։ եւ Հրեայ Սողոմոնն 'ի շնորհս Վարդապետաց եւ իբր նախածանօթ Պատրիարքին, ասէ՝ սոքա զշնորհս տեառնդ իմոյ խնդրեն։ Ի վիճաբանութենէ ասսի յայտնապէս երեւի թէ բովանդակ հարցմունք Բդեշխին են 'ի բանից Ցունաց։ զի Սախարեայն յառաջագոյն էր անդ, և 'ի ձեռն միջնորդաց և խոստմանց ձգեալ զնա 'ի կողմն իւրեանց, եւ նորա խոստացեալ կատարել զինդիրս նոցա և ընդ Մօճաքեանին գրեալ 'ի Կոստանդինուպոլիս։

Եւ ելեալ Վարդապետաց յԱտենէ Կուսակալին՝ պատմեցին Բեահեայ Պէյին զամենայն բանսն զոր խօսեցան եւ լուան, և ապա Մէհէմմէտ Ոստիկանին, և նորա քաջալերեալ զնոսա՝ խոստացաւ և ինքն եւս խօսիլ ընդ Բդեշխին և ընդ երկրորդի նորին։ Իսկ հայազգի գանձապետ Ցարութիւնն գտեալ զՎարդապետսն անդ՝ ծանոյց նոցա զմեկնիլ իւր գործով իւիք 'ի հայրենիս իւր, և ապա առաջի եդ նոցա 'ի դիմաց Բեահեային բերել փութով 250 քսակ վասն Կուսակալին և 20 վասն Բեահեային իբր թերհաչիւ, որով համարձակեսցի մնանել առ Բդեշխն վասն գործոյն, զի Ցոյնք բազումս խոստացեալ են։ և թէ՝ աղաչեցի ասէ զԲեահեայ Պէյն չպահանջել 'ի ձէնջ առաւել քան զխոստացեալն ձեր։ Եւ նոքա ետուն պատասխանի՝ ցաւ է մեզ բաժանումն ձեր 'ի մէնջ, զի Պատրիարքն եւ ծերունիք յուսացեալ 'ի միջնորդութիւնս քո առաքեցին զմեզ, եւ այժմ այսպէս թողեալ դնաս, այլ վասն դրամոցն զոր պահանջես՝ չունիմք երբէք ընդ մեզ դրամ, և 'ի կատարիլ